

ՍԽՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ
ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

**ԸՆԿԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

368
Խ-11

ՀՐԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ՊԵՏ. ԱՊԱՀՈՎ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1936 թ.



368
m-11 uf

Քարգւ. ուսւ. Լ. ՄԻՐԶԱՎԱԳՅԱՆ
Պատ. խմբագիր՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Տեխ. խմբ. յեկ սրբ. Ա. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ИНСТРУКТИВНЫЕ УКАЗАНИЯ

По выплате вознаграждения за павших за-
страхованных животных

Քանաքեռի մարզի

Հանձնված է տպագրության 16-ին դեկտ. 1935 թ.
Ստորագրված է տպագրութ. 14-ին հունվ. 1936 թ.

Դրամի թիվ № 330 Պատվեր № 1 Տիրաժ 3000

ՀԱՎԱՆԳՉԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

№ 3317 1934 թ. նոյեմբերի 25-ին

ԸՆԿԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ Ա-
ՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ի պարգաբանումն պարտադիր կոպարային տ-
պահովագրության կանոնների

Ընկած ապահովագրված անասունների համար
ապահովագրական վարձատրություն տալու գործի
դրվածքը հետազոտելիս պարզվել է, Վոր մի շարք շրջ-
ջաններում մասսայականորեն և անհիմն կերպով ա-
պահովագրական վարձատրություն չեն տալիս, իսկ
վորոշ շրջաններում ել շարունակում են ապահովագրա-
կան վարձատրություն վճարել այն անասունների հա-
մար, վորոնք ընկել են ակնհայտ անտնտեսագրու-
թյան, դրանց անխնա շահագործման և քնատաբար վե-
րաբերմունքի հետեվանքով:

Անտնտեսագրության, թափթփվածության և
քնատաբարության դեմ պայքարելու նպատակով շրջ-
շտապահություններն ու շրջապահանձնագրողներն ա-
նասունների առթիվ քնասներ լուծարելիս պետք է
դատակարգային արտակարգ զգոնություն ցուցաբերեն
և ուշադրությամբ ուսումնասիրեն այն բոլոր հանգա-

1009 4012
39/98

մանքները, վորոնց առկայությամբ տեղի յե ունեցել անասունի անկումը: Անասունները հիվանդության և անկման պատճառները շրջապատողությունը պետք է պարզի թե անձամբ և թե այդ գործին կոտնտեսային հասարակությանը (ապահովագրական հսկիչ պոստեր, գյուղական ակտիվ և այլն) և մասնագետներին (անասնաբույժներին, անասնաբուժականներին) մասնակից անելու միջոցով:

Կանոնների այս պարզաբանումը նպատակ ունի ոգնել ապահովագրական տեսուչներին և շրջապատող շաժողովներին ապահովագրական վարձատրություն տալու հարցերը գործնականորեն լուծելիս, քանի վոր այդ հարցերի ճիշտ լուծումն ապահովագրական աշխատանքների մեջ յեղած խեղաթյուրումները վերացնելու գրավականն և հանգիստանում, այն խեղաթյուրումները, վորոնք խիստ դատապարտվել են կուսակցության կենտրոնական կոմիտեյի կողմից:

Ինքնին պարզ է, վոր թվել անասունների հիվանդության և անկման բոլոր պատճառները շատ դժվար է, ուստի այս ցուցումներում մեջ են բերված միմիայն ֆնասների լուծարման ժամանակ ամենից հաճախ պատահող և ամենից բնորոշ պատճառները:

ՈՒԺԱՍՊԱՌԼԻՆԵԼԸ

Անասուններն ուժասպառ կարող են լինել՝

ա) անբավարար և անկանոն կերակրելուց,
բ) աշխատանքով խիստ ծանրաբեռնելուց.

գ) ծանր սուր հիվանդությունից կամ խրոնիկական հիվանդությամբ տառապելուց, ծերությունից:

դ) վատ խնամքից և անկանոն պահպանելուց (վոչ իր ժամանակին, վատ կազմակերպված կերակրում, շենքերի նեղվածություն, անբավարար ողափոխութամբ, անասուններին վատ մաքրելը, անկանոն ձիասարքը և այլն):

Անբավարար կերակրման հետևանքով անասուններն ուժասպառ կարող են լինել նաև այն տնտեսություններում, վորոնք լիովին ապահովված են կերով, բայց չեն կազմակերպել ախոռներն ու անասնակերը կանոնավոր կերպով կեր փոխադրելու գործը, ինչպես նաև այն դեպքերում, յերբ կերը շոայլվում և և չի հասնում անասուններին, յերբ հակողություն չկա անասուններին ժամանակին և ճիշտ կերակրելու գործի վրա և այլն:

Անասունների անբավարար կերակրումը կարող է հետևանք լինել նաև այն բանի, վոր տվյալ տնտեսությունը վատ է կազմակերպել կերի մթերումը և կեր չունի, և վոր կերն անտնտես պահելու պատճառով փչացել է:

Այսպիսով, ուրեմն, անբավարար սնվելուց անասուններն ուժասպառ են լինում և ընկնում հիմնականում ակնհայտ անտնտեսության պատճառով, յեթե այդ հաստատված է համապատասխան ակտերով: Շրջապատող շաժողովը նման դեպքերում չպետք է ապահովագրական վարձատրություն վճարի և անասունների անկման վերաբերյալ գործը պետք է հանձնի դատախազությանը հանցավորներին պատասխանատվության յենթարկելու համար:

Սակայն, պակասակերության (քաղց) հողի վրա անասունները կարող են ուժասպառ լինել նաև այն

դեպքում, յերբ տվյալ վայրը տարերային աղետի յե
յնեթարկվել (անբերրիության և այլն) և տնտեսու-
թյունը կեր չունի թեև բոլոր անհրաժեշտ միջոցնե-
րը ձեռք և առել, վորպեսզի անասուններն ապահով-
ված լինեն կերով: Յեթե մանրագնին հետադոտու-
թյամբ այդ կհաստատվի, ապա ապահովագրական
վարձատրությունը ընկած անասունի համար պետք և
վճարել:

Աշխատանքով խիստ ծանրաբեռնելուց անասունի
ուժասպառ լինելն ու ընկնելը բացահայտ անտնտեսու-
թյան կամ նույնիսկ ֆնասարար վերաբերմունքի ար-
դյունք է: Յուրաքանչյուր անասունի բեռնավորումը
պետք է լրիվ համապատասխանի նրա անհատական
ուժին ու սնունդին:

Անասունների ուժասպառության այն դեպքերը,
վորոնք ծանր սուր հիվանդության (թոքերի բորբո-
քում, դաբաղ և այլն) հետեվանք են կամ ել խրոնի-
կական հիվանդության հետեվանք (խոշոր չեղջուրա-
վոր անասունների թոքախտ, խոզերի ժանտախտ, ստա-
մոքսային—աղիքային խրոնիկական հիվանդություն-
ներ և այլն) չի կարելի անտնտեսության վերադրել և
այդ պատճառով ընկած անասունների համար ապահո-
վագրական վարձատրութուն չվճարել, յեթե միայն
այդ հիվանդությունն ինքը, վոր անասունի ուժաս-
պառումն ու անկումն և առաջ բերել, ակնհայտ անտըն-
տես կամ ֆնասարար վերաբերմունքի հետեվանք չէ:

Անասունների ուժասպառման այն դեպքերը, վո-
րանք «գ» կետում հիշատակված պատճառների հետե-
վանք են պետք է դիտել վորպես անտնտեսություն և
յեթե կհաստատվի, վոր անասունն ուժասպառ և յիղել

և ընկել վատ խնամելու և պահպանելու հետեվանքով,
առաջ ապահովագրական վարձատրություն չպետք է
տալ և հայտնել այդ մասին դատախազությանը հան-
ցավորներին պատասխանատվության յենթարկելու
համար:

ՁԻԵՐԻ ԾԱԿՈՑՆԵՐԻՑ ՏԱՌԱՊԵԼԸ

«Ծակոցներ» ասելով պետք է գլխավորապես հաս-
կանալ ստամոքսի և աղիքների դանադան տեսակի հի-
վանդություններ, յերբ միաժամանակ անասունի ստա-
մոքսը խիստ ցավում և (ծակոց):

Ձիերի ծակոցներով տառապելը մեծ մասամբ
անտնտես պահպանման և կերակրման հետեվանք են:
Որինակ՝ «ծակոցները գերսնելուց» հետեվանք են այն
բանի, վոր անասունը չափազանց մեծ քանակությամբ
վառորակ կամ դժվարամարս (դեռահաս վարսակ,
կարտոֆիլ և այլն) կամ ել վատ պատրաստված (չթըր-
ջած, չմանրած) կեր և ուտում, «ջղածգական ծակոց-
ները» մեծ մասամբ քրտնած ձիու մրսելու հետեվանք
են, «քամու կամ դադային ծակոցները» ուռչող, շրջմուլիկ
կեր տալու հետեվանք են:

Մակայն, պատահում են ծակոցների և ախտիսի
տեսակներ, վորոնք կարող են վոչ մի կապ չունենալ
անասունների անտնտես պահպանման և կերակրման
հետ, որինակ—«ձիճվային ծակոցները», վոր առաջ են
բերում ձիճուների թրթուրները, ծակոցներ աղիքների
խցումից, աղեվորտի ժամանակ, միզային, յերեկա-
մային, լյարդային ծակոցներ, ինչպես նաև ծակոց-
ներ վորոշ համաճարակային հիվանդությունների (սիրի-

ըխբաւ, կատաղություն և աշխատանք:

Բացի այդ, պետք է նկատի ունենալ, Վոր վորոշ դեպքերում ծակոցներ կարող են առաջ գալ փչացած առամներով կամ ծերութեան պատճառով կերը վատ ծամելուց կամ արագ ու ազահաբար ուտելուց, ինչպես նաև պատահում է այն ձիերի հետ, վորոնք ող կուլ տալու սովորութիւն ունեն: Այս բոլորը վկայում է այն մասին, Վոր Պետապի որգանները չպետք է հրաժարվեն ապահովագրական վարձատրութիւն վճարելուց բոլոր դեպքերում, յերբ ձիերն ընկնում են ծակոցներից:

Ի հարկէ, ձիերի կրկնվող (հաճախակի) և հատկապես մասսայական անկումը ծակոցներից նույն տընտեսութեան մեջ կարող է առիթ տալ կասկածելու, Վոր այնտեղ անտնտես կամ քնասարար վերաբերմունք է ցույց տրվում ձիերին և նման դեպքերում շրջ. ապտեսչութիւնը չպետք է ապահովագրական վարձատրութիւն վճարի և ձիերի անկման վերաբերյալ գործը պետք է հանձնի քննչական որգաններին անասունների հիվանդութեան պատճառները պարզելու համար:

Իսկ, ընդհանրապես, յերբ ձիերն ընկնում են ծակոցներից անհրաժեշտ է հարցաքննել այն բոլոր անձանց, վորոնք խնամում են անասուններին կամ աշխատում նրանց հետ, ինչպես նաև վկաներին (հարեմաններին) և գյուղական կամ կոլտնտեսային ապահովագրական ակտիվին ու մանրամասն պարզել թե ծակոցներն ինչից են առաջ յեկել: Ընդվորում, այդ պատճառները ճիշտ վորոշելու համար միջոցներ ձեռք պետք է առնի վոչ միայն գյուղական ապահովագրական հանձնաժողովը, Վոր անասունի անկման մասին ակտ է կազմում, անասնաբուժական հսկողութեան ներ-

կայացուցիչը, Վոր ներկա յե դիահատութեան կամ անասնաբուժական կայանի ամբուլատորային տվյալները հիման վրա տալիս է իր յեզրակացութիւնն անասունի անկման մասին այլ և յեթե անհրաժեշտ է նաև շրջանային տեսչութիւնն ու շրջանային ապահովագրական հանձնաժողովը տվյալ դեպքը տեղում հետազոտելու կամ շրջանասնաբուժի միջոցով:

Անասունները ծակոցներից ընկնելու դեպքում ապահովագրական վարձատրութիւն. չի տրվում, յեթե անվիճելիորեն հաստատված է, Վոր անասունի անկումն ակնհայտ անտնտեսութեան հետեանք է:

ԽՈՇՈՐ ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՓՈՐԻ ՈՒՌՁԵԼԸ (ՏԵՄՊԱՆԻՏ)

Պորը յեղջուրավոր անասունների փորը խիստ ուռչում է գաղերի կուտակումից, Վոր զարգանում են ստամոքսի մեջ յերբ անասունը մեծ քանակութեամբ հյութալի շրջմուխ կեր է ուտում (կարմիր յերեքնուկ մինչ ծաղկելը, առվույտ, կանաչ վիկ կամ հնդկացորեն, թառամած խոտ, կաղամբի և բոխկի վոչ թարմ տերեւներ և այլն), անժամանակ դուրս է գալիս արոտատեղերն, չոր կերից խիւղյն անցնում է կանաչ կերի, արածում է ճահճային արոտատեղիներում կամ այնպիսի տեղերում, վորտեղ խոտը ծածկված է ցողով և այլն:

Փորի խիստ ուռչելը շատ հաճախ նաև անասունների անտնտես կերակրման ու արոտատեղային պահպանման ցուցանիշ է ծառայում:

Բայց կարող են լինել և այնպիսի դեպքեր, յերբ

փորի խիստ ուռչելը դժբախտ պատահարի հետեւանք լինի, որինակ, յերբ անասուններն անձրեվի ժամանակ մնացել են արոտատեղում և կերել են խոնավ, ֆլասա-կար կեր և այլն:

Փորի խիստ փքումով (ուռչել) հիվանդ անասու-նին արագ հասցրած ոգնությունը մեծ մասամբ փըր-կում է անկումից:

Փորի փքումից ընկած խոշոր յեղջյուրավոր անա-սունների համար ապահովագրական վարձատրություն տալու հարցը քննելիս պետք է ղեկավարվել հետեւյալով՝

1. Այն դեպքերում, յերբ խոշոր յեղջյուրավոր անասունները կրկնվող (հաճախակի) և հատկապես մասսայաբար են փորի փքումից (ուռչելուց) ընկնում նույն տնտեսության մեջ, ապահովագրական վարձա-րություն տալու հարցի լուծմանը պետք է մոտենալ այնպես, ինչպես ձիերի մասսայական անկմանը ծակոց-ներից:

2. Այն բոլոր դեպքերում, յերբ խոշոր յեղջյուրա-վոր անասունն ընկնում է փորի փքումից, պետք է պարզել՝ թե արդյոք հասցված է յեղել շուտափուլթ ոգնություն անասունին, յեթե միայն անասունի ան-կումը տեղի չի ունեցել այնքան անակնկալ, վոր փա-տորեն ոգնություն ցույց տալը հնարավոր չի յեղել: Յեթե հաստատվում է, վոր չնայած ոգնություն ցույց տալու հնարավորությանն այնուամենայնիւ այդպիսին ցույց տրված չի յեղել, ապա շրջապատեսչությունը ա-պահովագրական վարձատրությունը չպետք է վճարի:

3. Պետք է յուրաքանչյուր առանձին դեպքում պարզել թե արդյոք անասունի հիվանդությունը տեղի չի ունեցել անտնտես կերակրելու, արոտատեղային

պահպանման կամ դժբախտ պատահարի պատճառով: Այդ նպատակի համար անհրաժեշտ է լինում պարզել նույն տնտեսության մնացած անասունների (սուղջ) կերակրման և արոտատեղային պահպանման պայման-ները:

Բացի այդ, քանի վոր խոշոր յեղջյուրավոր ա-նասունների տիմպանիտը հաճախակի խրոնիկական բնույթ է կրում ու ստամոքսի թույլ գործողության կամ կերակրավորի խցման պատճառով զկոտոցի հա-պաղելու կամ ել ուռուցքով սեղմելու հետեւանք է լի-նում և այլն, ապա նման դեպքերում պետք է պարզել թի արդյոք անցյալում անասունը չի տառապել ստա-մոքսային, աղիքային հիվանդությամբ և ձեռք է ա-ռել արդյոք տնտեսությունն անհրաժեշտ միջոցներ նրան բուժելու համար:

Թ Ո Ւ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

Անասունները թունավորվել կարող են բույսեր և սունկեր ուտելիս, ինչպես նաև գյուղատնտեսական ֆլասատունների և գիշատիչների դեմ պայքարելու հա-մար գործածվող թույներով թունավորված տեղերում արածելիս, գործարանային մնացորդներով, ներկերով թունավորված ջուր խմելիս և այլն: Անասունները հա-ճախ թունավորվում են անտնտեսվար արոտատեղա-յին պահպանման և կերակրման կամ ել դասակարգա-յին թշնամու ֆլասարարության հետեւանքով: Թու-նավորման յուրաքանչյուր դեպք պետք է մանրադն-նին հետազոտել քննչական օրգանների միջոցով անա-սունների անկման իսկական պատճառները պարզելու և հանցավորներին հայտաբերելու համար:

Իհարկէ, անասունը կարող է թունավորվել նաև դժբախտ պատահարի հետեւանքով: Սակայն, հետազոտությունը միայն կարող է պարզել թե արդյոք տվյալ դեպքում դժբախտ պատահար է տեղի ունեցել թե ֆնասարարություն կամ կոպիտ անտնտեսութարություն:

Անասունների թունավորման դեպքերում ապահովագրական վարձատրություն տալու հարցը պետք է լուծել քննության արդյունքների հիման վրա:

ՇՆՀԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շնչառության որգանների հիվանդությունների (կոկորդի բորբոքում, բրոնխիտ, թոքերի բորբոքում, թոքերի ուռուցք, թոքերի եմֆիզեմա և այլն) նույնպես յերբեմն անասունների անտնտես պահպանման հետեւանք են լինում (չտաքացրած, տոթային և խոնավ շենքեր, տաքացած անասուններին սառը ջուր խմացնելը, փոշոտ և փչացած կեր տալը), ցուրտ անձրեւի և քամու տակ անասունի մնալու, տաքացած անասունին լողացնելու, անասուններին անկանոն շահագործելու հետեւանք և այլն:

Սակայն, պետք է նկատի ունենալ, վոր շնչառության որգանների հիվանդությունները հաճախ կարող են և կախված չլինել անասունների անտնտես վար պահպանումից: Այսպես, որինակ, դրանց պատճառը կարող են լինել ճիճուները, ինչպես նաև անասունի համաճարակ հիվանդությամբ բռնվելը (խոշոր յեղջուրավոր անասունների տարափոխիկ թոքերի բորբոքումը, ձիերի պլեյրոպնեմոնիան և այլն) կամ, վերջապես, բարդությունների դեպքում, յերբ անա-

սունները բռնվում են այլ ծանր վարակիչ և խրոնիկական հիվանդություններով (ձիերի թոքերի բորբոքում և բրոնխիտը մաղափոխութւան ժամանակ, թոքերի եմֆիզեման բրոնխիտների կատարի ժամանակ և այլն):

Բացի այդ, անասունին չմրսացնելու հնարավորությունը շատ հաճախ կախված չէ ձիու տիրոջ կամ ձիուն խնամողի կամքից: Այսպես, որինակ, կարող են լինել դեպքեր, յերբ ցուրտ յեղանակին սայլ քշելիս հարկադրված են լինում տաքացած ձիերին կանգնեցնել բաց փողով, քամու դիմաց (անիմները կոտրվել և այլն), յերբ անասունը ճանապարհին յեղած ժամանակ փոթորիկ է բարձրանում և այլն:

Շնչառության որգանների հիվանդության դեպքում ապահովագրական վարձատրություն տալու հարցը լուծելիս պետք է մանրադնին պարզել այն բոլոր հանգամանքները, վորոնք անասունի հիվանդության և անկման պատճառ են ծառայել, պարզել թե արդյոք այդ հանգամանքներն անտնտեսութարության, դեպի անասունն անուշադիր լինելու հետեւանք չեն յեղել և այլն:

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Չանազան տեսակի մեխանիկական ֆնասվածքները (վերքեր, ջարդվածք, սղմվածք, ձեռքերի և վոտքերի կոտրվածք) շատ հաճախ հետեւանք է լինում այն բանի, վոր բացակայում է անասունների անհրաժեշտ խնամքը, վատ է լինում լծասարքն ու անկանոն լծվածքը, նեղ շենքերում են պահվում անասունները

և այլն: Անաստենների մեխանիկական ֆլասովածքները հաճախ նաև դասակարգային թշնամու ֆլասարարութ-
թյան հետեւանք են լինում:

Իսկ անասունների՝ մեխանիկական ֆլասովածքներ-
րի հետեւանքով ընկնելը շատ հաճախ բացատրվում է
անժամանակ առաջին ոգնությա-ի և բուժման բացա-
կայությամբ: Յեթե պարզվում է, վոր անասունի մե-
խանիկական ֆլասովածքն ու անկումն ակնհայտ ան-
տնտեսության կամ ֆլասարարության հետեւանք
է յեղել, ապա շրջապատեսչությունն ապահովագրական
վարձատրությունն չի վճարում:

Սակայն, պետք է նկատի ունենալ, վոր անա-
սունների մեխանիկական ֆլասովածքներն ու անկու-
մը կարող են տեղի ունենալ և այն դեպքերում, յերբ
նրանք լավ են պահպանվում ու խնամվում: Որինակ,
աշխատանքի ժամանակ կարող է ձին ծանր ջարդվածք
ստանալ, վորքը կոտրվել կամ ինքը վերավորվել և
այլն:

Յեթե հետազոտությամբ հաստատվում է, վոր
անասունը մեխանիկական ֆլասովածքից դժբախտ պա-
տահարի պատճառով է ընկել, թեև լավ է պահպան-
ված յեղել ու խնամվել տվյալ տնտեսության մեջ, ա-
պա ապահովագրական վարձատրությունն պետք է
վճարել:

Դ Ժ Բ Ա Խ Տ Դ Ե Պ Ք Ե Ր

Անասունները կարող են այնպիսի դժբախտ դեպ-
քերի զոհ գնալ, վորոնք կապ չունեն մեխանիկական
ֆլասովածքների հետ, որինակ, յերբ նրանք խեղդվում

են, այրվում, գնացքի տակ են ընկնում, արեւահար
են լինում, վայրենի գազանների զոհ են դառնում և
այլն:

Շատ դժբախտ դեպքեր տեղի յեն ունենում ա-
նասունների անհրաժեշտ պաշտպանության բացակա-
յության կամ նրանց անխնամության պատճառով:
Հետեւապես, այն բոլոր դեպքերում, յերբ հետազոտու-
թյամբ պարզվում է, վոր ապահովագրվողը հնարա-
վորություն ունեցել է, բայց ձեռք չի առել անհրա-
ժեշտ նախազգուշական միջոցներ անասուններին
պաշտպանելու համար, վորի հետեւանքով ել դժբախտ
դեպքն է տեղի ունեցել, շրջապահանձնաժողովն ապա-
հովագրական վարձատրությունն չի վճարում:

Սակայն, ամենից հաճախ լինում են այնպիսի
դժբախտ դեպքեր, վորոնք տեղի յեն ունենում վոչ
ապահովագրվողի մեղքով: Դրանք են այն դեպքերը,
վորոնք տարերային աղետի բացահայտ ընույթ են
կրում, որինակ, յերբ անասունը շանթահարվում
(կայծակը խփում է), կարկտահարվում, ընկնում է
լեռնային փլվածքից և այլն, ինչպես նաև վերը հիշա-
տակված դժբախտ դեպքերը, (հրդեհը, գազանների
զոհ դառնալը և այլն), յեթե դրանք տեղի են ունենում
չնայած նրան, վոր ձեռք է կազմակերպված անասուն-
ների պաշտպանությունը:

Այսպես «որինակ» անասունը կարող է խեղդվել
լողանալու ժամանակ, չնայած, վոր լավ է զրված ա-
նասունների հսկողության գործը: Անասունը կարող է
այրվել հրդեհի ժամանակ, չնայած, վոր տվյալ տնտե-
սության մեջ անասուններն որինակելի կերպով են
պահպանվում և որինակելի կերպով կազմակերպված է

հակահրդեհային պաշտպանությունը: Անասունը կա-
բող ե գերատիչներին զոր գնալ, չնայած, վոր կան լավ
հովիվներ և պահապան շներ և այլն:

Հետեւապես, դժբախտ դեպքերի պատճառով ըն-
կած անասունների համար ապահովագրական վարձա-
տրություն տալու հարցն ել վորոշելիս պետք ե հաշիւի
առնել այն բոլոր պայմանները, վորոնցում դեպքն ե
տեղի ունեցել և յեթե մանրագնին հետազոտությամբ
պարզվում ե, վոր տնտեսութեան մեջ կազմակերպված
ե յեղել անասունների պաշտպանություն, կանոնավոր
հսկողություն և դժբախտ դեպքը տեղի յե ունեցել ա-
պահովագրվողի կամքից անկախ, ապա պետք ե վճա-
րել ապահովագրական վարձատրությունը:

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անասուններին վարակվելուց կարելի յե պաշտ-
պանել վոչ միայն լավ խնամքով ու պահպանությամբ,
այլ և կատարելով վարակիչ հիվանդությունների դեմ
պայքարելու ու դրանք կանխելու բոլոր անհրաժեշտ
միջոցները (կարանտին, մեկուսացում, շենքերի ախ-
տահանում, սրսկում և այլն):

Սրա կապակցությամբ ել, վարակիչ հիվանդու-
թյունից ընկած անասունի համար վնասներ վճարելու
հարցը վորոշելիս պետք ե պարզել՝ թե անասունի ան-
կումը հետեւմանք չի յեղել այն բանի, վոր ապահովա-
գրվողը չի պահպանել սահմանված պարտադիր վորո-
շումները և չի կատարել անասնաբուժական հսկողու-
թեան առաջարկած ձեռնարկումները վարակիչ հիվան-
դությունների դեմ պայքարելու և դրանք կանխելու
վերաբերյալ: Այդ պետք ե պարզել թե գյուղական

ապահովագրական հանձնաժողովի կողմից ահա կազ-
մելու ժամանակ և թե այդ ահտերը շրջանային ապա-
հովագրական հանձնաժողովի կողմից քննութեան առ-
նելու ու անասունի անկման պատճառների մասին
անասնաբուժական անձնակազմի կողմից յեզրակացու-
թյուն տալու ժամանակ:

Ք Ո Ս

Անասունները քոսից ընկնում են անտնտես
պահպանելու պատճառով (անասունին չեն մաքրում,
բուժական ոգնություն չեն հասցնում):

Քոսի բուժումը, մանավանդ յեթե այդ ժամանա-
կին ե արվում, այնքան պարզ ե, (բացառութեամբ
գաղակամերային բուժման և վաննային բուժման) վոր
կարող են կիրառել անասուններին խնամողներն ի-
րենք, անասնաբուժի կամ անասնաբուժակի ցուցում-
ներով: Ուստի, յեթե անասունն ընկել ե քոսից, շրջ-
ապահանձնաժողովներն ապահովագրական վարձատրու-
թյուն չպետք ե վճարեն:

Ծ Ե Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Անտնտեսվարությունը, անասունների վատ պահ-
պանումը, անկանոն խնամքն ու կերակրումն և ան-
խնա շահագործումը ծեր անասունների վրա շատ ա-
վելի խիստ են անդրադառնում քան ջահելների վրա:
Ուստի, շատ հաճախ են դեպքերը, յերբ անտնտեսվա-
րությունից ընկնում են այնպիսի ծեր ձիեր, վորոնք
նպաստավոր պայմաններում կարող եյին դեռ յերկար
ժամանակ աշխատունակ մնալ:



Անասնաբուժական անձնակազմի յեզրակացութիւններն այն մասին, զոր անասունն ընկել և «ծերությունից» առանց մատնանշելու անասունի անկման իսկական պատճառը չպետք և վորպես անվիճելի հիմք ծառայեն ապահովագրական վարձատրութիւն վճարելու համար: Այդ դեպքերը լրացուցիչ հետազոտման կարիք ունեն, վորպեսզի պարզված լինի ծեր անասունի անկման պատճառները:

«Ծերությունից» ընկնելու յուրաքանչյուր առանձին դեպքում պետք և պարզել՝ թե արդյոք անասունի անկման պատճառը չի յեղել անտնտեսութեան պատճառը կամ վնասարար վերաբերմունքը, վորը քողարկվել և անասունի «ծերությամբ»:

Այն դեպքերում, յերբ պարզվում և, վոր ծեր անասունի անկումն անտնտեսութեան պատճառով է, վնասարար վերաբերմունքի հետեւանք չէ՝ ապահովագրական վարձատրութիւն վճարվում և:

ԿՈՆՏԵՆՏՆԵՐԻ ՅԵՎ ՍԿԶԻՆԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՆԱՍՆԵՐ ՀԱՏՈՒՑԵԼԸ

Յուրաքանչյուր դեպքում, յերբ կոտնտեսութեան կամ սկզբնական կոոպերատիվի ապահովագրված անասունի անկման պատճառն առանձին կոտնտեսականների կամ անասուններին խնամող և նրանց վրա հրահող անձանց անտնտես կամ վնասարար վերաբերմունքի հետեւանքն և հանդիսանում, շրջապատեցութիւնը կամ շրջապահանձնաժողովը պարզում են, թե այդպիսի կոտնտեսութեան կամ կոոպերատիվի դեկա-

վաթութիւնը մասնակից չի յեղել անասունի անկմանը, նրանք (նախագահը, վարչութեան անդամը, բրիգադիրը) միջոցներ ձեռք առել են այդպիսին կանխելու, թե այդ դեպքը և թե նման դեպքեր, թե անասունի անկումը տեղի յե ունեցել կոտնտեսութեան կամ կոոպերատիվի դեկավար կազմի բացահայտ կամ անուղղակի աջակցութեամբ, թույլ տվութեամբ կամ անգործութեամբ: Որինակ կազմակերպված են արդյոք անասունների կանոնավոր պահպանումը, խնամքը, կերակրումը, պաշտպանութիւնն ու շահագործումը, սահմանված և արդյոք հակահիշատակն պաշտպանութեան, կազմակերպված և արդյոք, հսկողութիւն այն անձանց աշխատանքի վրա, վորոնց հանձնարարված և տնտեսական աշխատանք կատարելը, թե այն անձինք, վորոնց մեղքով ապահովագրական դեպքն և տեղի ունեցել աշխատանքի դրվել են առանց անհրաժեշտ ստուգման և դասակարգայնորին-ոգուտ են կամ պահանջվող վորակավորումը չունենք և այլն:

Յեթե անասունն ընկել և առանձին կոտնտեսականներին, ախոռապահներին, անասնապահներին, հովիվներին և այլն անտնտեսավար, անխնա կամ վնասարար վերաբերմունքի հետեւանքով և այդ տեղի յե ունեցել կոտնտեսութեան կամ կոոպերատիվի դեկավար կազմի գիտութեամբ, անգործութեամբ և թույլ տվութեամբ, ապա ապահովագրական վարձատրութիւն չպետք և վճարել:

Այն դեպքերում, յերբ կոտնտեսութեան կամ կոոպերատիվի դեկավար կազմը վոչ ուղղակի, վոչ ել անուղղակի կերպով անասունի անկմանը հաղորդակից չէ, երբ անասունի անկումը տեղի յե ունեցել առան-

ձին կոլտնտեսականի, կառապանի, հովվի անտնտես-
վար անխնա կամ վնասարար վերաբերմունքի հետե-
վանքով, չնայած, վոր կոլտնտեսություն կամ կոոպե-
րատիվի ղեկավար կազմը ձեռք ե առել բոլոր միջոց-
ները նման դեպքերից խույս տալու ու դրանք կան-
խելու համար, ապահովագրական վարձատրություն
պետք ե վճարել:

Վերոհիշյալ անձանց մեղքով ընկած անասունի
համար կոլտնտեսությունը կամ կոոպերատիվին ապա-
հովագրական վարձատրություն վճարելով, Պետապի
որդանները միաժամանակ պարտավոր են դատի տալ
այն անձանց, վորոնց մեղքով տվյալ վնասն ե տեղի
ունեցել:

1-ին ուրիմակ. Կոլտնտեսություն • մեջ կամ կոլ-
տնտեսային բրիգադի ձին ընկել ե ծակոցներից: Հաս-
տատված ե, վոր մեղավորը կոլտնտեսական ախուռա-
պանն ե, վորը չափից ավելի կերակրել ե ձիուն ե վոր
տվյալ կոլտնտեսություն մեջ կամ բրիգադում ձիերին
անկանոն կերակրելու պատճառով մինչև այդ ել անկ-
ման դեպքեր յեղել են, ընդվորում, վոչ բրիգադիբը
ե վոչ ել կոլտնտեսություն վարչությունը միջոցներ
ձեռք չեն առել ձիերի կերակրման գործը ճիշտ կազ-
մակերպելու համար, ախուռապանների կազմում կան
դասակարգայնորեն ոտար տարբեր ե այլն: Տվյալ
դեպքում ապահովագրական վարձատրությունը չպետք
ե վճարել:

2-րդ ուրիմակ. Կոլտնտեսություն մեջ ձին ջերմա-
հարվել ե: Հաստատված ե, վոր կոլտնտեսական ախու-
ռապանը, վորին հանձնարարված ե յեղել կոլտնտեսու-
թյան գործերով գնալ ձիով շրջան, չնայած ստատիկ

շոգին, ձին շատ արագ ե քշել: Ձիերի շահագործումը
կոլտնտեսություն մեջ ճիշտ ե կազմակերպված, ախու-
ռապանները նվիրված են կոլտնտեսային շինարարու-
թյանը, վստահելի (ստուգված) են, այն ախուռապանը,
վորը տվյալ ձիով պնացել ե շրջան յերեք ձիերի հետ
անխնա չի վարվել: Ապահովագրական վարձատրու-
թյուն կոլտնտեսությունը պետք ե վճարել, իսկ հան-
ցավորին պատասխանատվության յենթարկել:

Այս բոլորից հետևում ե, վոր յուրաքանչյուր
ընկած անասունի հիվանդության ե անկման պատ-
ճառը պետք ե տեղում մանրադննին պարզել ե միմի-
այն այն ժամանակ, յերբ շրջապատեցությունը չի
կասկածում ակտում ցույց տրված տվյալների ճշտու-
թյան մեջ, վնասների հատուցման հարցը հանձնվում ե
շրջապահանձնաժողովի քննությանը, վորը ստուգելով
անասունի հիվանդության ե անկման հանգամանքները
վորոշում ե՝ հատուցել վնասները, մերժել, պատասխա-
նատվության յենթարկել անասունի անկման գործում
հանցավորներին ե այլն: Պարզաբանման մեջ չնախա-
տեսված դեպքերը կարելի ե լուծել ցույց տրված այս
կամ այն դեպքին համեմատ: Ընդվորում, պետք ե հի-
շել, վոր ապահովագրվողի մեղքն անասունի անկման
գործում վորոշելիս ե ապահովագրական վարձատրու-
թյուն տալու կամ չտալու հարցը լուծելիս միշտ պետք
ե մանրադննին հետազոտել տեղի ունեցած դեպքը:
Անասնաբուժական անձնակազմի ոգնությունը պետք ե
վորոշել անասունի հիվանդության ե անկման պատ-
ճառները, պետք ե պարզել՝ թե ինչ ե արել ապահու-
վագրվողն անասունի հիվանդությունն ու անկումը
կանխելու համար, ինչպես նաե միջոցներ ձեռք առ

նվել են արդյոք հիվանդ անասունին անհրաժեշտ բու-
ժական ոգնություն հասցնելու համար և կատարել է
արդյոք ապահովագրվողն անասնաբուժական տնձնա-
կազմի ցուցումները հիվանդ անասունին բուժելու կամ
վարակի տարածումը թույլ չտալու համար:

ԽՍՀՄ Պետապի գլխավոր վարչության պես՝
Ա Ր Ա Լ Ք Վ.

Ավագ խորհրդատու՝ Ո Չ Ս Ն



<< Ազգային գրադարան



NL0218914

43.821